ՀՅՈՒՍԻՍԱՏԼԱՆՏՅԱՆ ԴԱՇԻՆՔԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ՆԱՏՕ-ի և նրա անդամների շահերի կարևորումը Հարավային Կովկասում, որը մեծապես առնչվում է հակաահաբեկչական պայքարին, կենտրոնական Ասիայում և Աֆղանստանում ՆԱՏՕ-ի ստանձնած առաքելությանը և դաշինքի դերակատարությանը "Մեծ Մերձավոր Արևելք" ծրագրի իրականացման գործում, հասել է այնպիսի մակարդակի, որը զգայունություն է ենթադրում տարածաշրջանային հիմնախնդիրների շուրջ ծավալվող զարգացումների, դրանց լուծման ուղիների քննարկումների և իրադարձությունների հնարավոր աննպաստ զարգացումների նկատմամբ: Այդ ֆոնի վրա, հարավկովկասյան երկրները (հիմնականում Վրաստան և Ադրբեջան) հաճախ են սկսել շահարկել՝ ՆԱՏՕ-ի կողմից տարածաշրջանի հիմնախնդիրների լուծմանը հնարավոր մասնակցություն ցուցաբերելու հարցը:

Խոսուն է Հարավային Կովկասի և կենտրոնական Ասիայի հարցերով Ջ.Հոպկինսի համալսարանի առաջատար մասնագետ Ս.Քորնելի կողմից արտահայտված միտքը. ինչո՞ւ Հարավային Կովկասը չպիտի ներառնվի այն տարածաշրջանների կազմի մեջ, որոնք գտնվում են միջազգային հանրության ուշադրության կենտրոնում՝ իրենց ունեցած հիմնախնդիրների լուծմանը առաջնահերթ նշանակության տալու պատճառով: Ինքը՝ Քորնելը, պատասխանում է հռետորական հարցին. որովհետև վերջին տասնամյակում Հարավային Կովկասն արդեն իսկ ընդգրկված է միջազգային հանրության աշխատանքային օրակարգում:[1]

Տարածաշրջանային հիմնախնդիրների լուծման գործում ներգրավված են այնպիսի հեղինակավոր միջազգային կառույցներ, ինչպիսիք են ՄԱԿ-ը և ԵԱՀԿ-ն: Ընդունելով Քորնելի հարցադրման արդիականությունն ու պատասխանի իրավացիությունը, պետք է նշել, որ, այնուամենայնիվ, այդ շահագրգռությունը չի նշանակում տարածաշրջանային խնդիրների լուծման համար միանշանակ բարենպաստ մթնոլորտի ապահովում: Միջազգային կառույցները, ուժի կենտրոններն ու առանձին երկրներն ունեն սեփական շահերով

[1] "Regional Security in the South Caucasus: The Role of NATO" Central Asia-Caucasus Institute, Paul H. Nitze School of Advanced International Studies, Johns Hopkins University. Svante E. Cornell, R. McDermott . Washington D.C. 2004, p 3

պայմանավորված մոտեցումներ: Հյուսիսատլանտյան դաշինքը սկզբունքորեն տարբերվում է՝ անվտանգության ապահովման իր մեխանիզմների յուրատիպությամբ և առաջին հերթին իր անդամ պետությունների շահերը, որպես հնարավոր միջամտության խթանիչ գործոն ունենալու հանգամանքով. հետևաբար տարածաշրջանը ՆԱՏՕ-ի կողմից կարևորվում է որոշակի հանգամանքների ազդեցության շրջանակներում:

Հարավկովկասյան հակամարտությունները գտնվում են իրենց լուծման բարդ և երկարատև ճանապարհին: Միջազգային ոչ մի կառույց և միջնորդ առայժմ չի առաջարկել դրանց լուծման համընդհանուր ընդունելի տարբերակները: "Դեղամիջոց" չունի նաև Հյուսիսատլանտյան դաշինքը: Կովկասյան տարածաշրջանը իր ուրույն առանձնահատկությունն ու հարաշարժումն ունի: ՆԱՏՕ-ն չունի որևէ հրաշագործ լուծում ոչ այս տարածաշրջանի, ոչ էլ ողջ Եվրոպայի հիմնախնդիրների լուծման համար: Սակայն դաշինքի քաղաքականության հաջողությունը համագործակցության ակտիվացման, սպառազինությունների վերահսկման գործում կարող է ուժեղացնել անվտանգությունը բոլորի համար: Ավելին, միասնական գործող Եվրոպայում այնպիսի երկրները, ինչպիսին Հայաստանն է, պետք է ունենան իրենց ուրույն տեղն ու խոսքը. նման մոտեցում դեռևս 1997-ին արտահայտել էր ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Խ.Սոլանան:[2]

Նոր Եվրոպան պահանջում է նոր մոտեցումներ ցուցաբերել անվտանգության խնդիրներին: Այն պահանջում է համընդգրկուն մոտեցում, ինչը թույլ կտա միաժամանակ օգտագործել քաղաքական, տնտեսական և ռազմական միջոցները՝ կանխելու և կառավարելու ճգնաժամերը, ինչպես նաև պաշտպանելու և խթանելու իր հիմնարար արժեքները: ՆԱՏՕ-ն իր ուրույն դերն ունի նմանօրինակ մոտեցման գործում:

Լուծված հակամարտություններով և կայուն Հարավային Կովկասը, որը տարածաշրջանային և ավելի լայն շրջանակով անվտանգությանը սպառնացող վտանգների դեմ հանդես կգա, որպես միևնույն արժեքներն ու մոտեցումները կիսող միասնական միավոր. այսպիսին են ցանկանում տարածաշրջանը տեսնել անվտանգության ապահովման կառույցներ հանդիսացող ԵԱՀԿ-ն, ՆԱՏՕ-ն: Ռազմա-քաղաքական դաշինքի՝ ՆԱՏՕ-ի կողմից նման մոտեցումը կարելի է հիմնավորել նրա որդեգրած քաղաքական կուրսի մի շարք առաջնահերթություններով: Դրանց մեկնաբանությունը ենթադրում է նաև այն

---

[2]ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Խ.Սոլանայի ելույթը Հայաստանի Ամերիկյան համալսարանում, Երևան, 12 փետրվարի, 1997թ.

հարցի պատասխանը, թե ինչպե՞ս է դաշինքը տրամադրված մասնավորապես Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման նկատմամբ:

Եվրոատլանտյան տարածաշրջանում անվտանգության խնդիրների նկատմամբ նոր մոտեցումը մասնավորապես արտահայտվում է անվտանգության անմասնատելիության գաղափարի գիտակցմամբ: Դա ենթադրում է այլ պետությունների անվտանգության հաշվին սեփական անվտանգությունը ապահովելու անհեռանկարայնությունն ու վերջնական հաշվով անշահավետությունը, առանձին երկրի անվտանգության ապահովման անբաժանելիությունը այն տարածաշրջանի կամ կազմակերպության անդամների անվտանգության ապահովումից, որին մաս է կազմում տվյալ երկիրը:

Այս չափանիշները գիտակցվել են առաջին հերթին ԵԱՀԿ շրջանակներում և վերաբերում են եվրոպական բոլոր երկրներին, կազմակերպություններին ու տարածաշրջաններին:*

Այդ չափանիշներին նվիրվածությունը ամրապնդվում է ՆԱՏՕ-ի ԳԻԽ ծրագրի շրջանակներում: Անվտանգության անմասնատելիության մասին գաղափարը, որը կիսում են եվրոատլանտյան գոտու երկրները (նրանք միաժամանակ և ՆԱՏՕ-ի և ԵԱՀԿ-ի անդամներ են. ԵԱՀԿ անդամ են նաև ԱՄՆ-ը և Կանադան), վերջիններիս մղում է հնարավորինս համաձայնեցված քայլերի այնպիսի տարածաշրջանում, ինչպիսին է Կովկասը: ԳԻԽ ծրագիրը առաջնային նպատակ ունի զարգացնելու տարածաշրջանային համագործակցությունը:

Մեկ այլ կարևոր հանգամանք, որը պայմանավորում է տարածաշրջանային հակամարտությունների և մասնավորապես ԼՂ հիմնահարցի խաղաղ լուծման մեջ Հյուսիսատլանտյան դաշինքի շահագրգռությունը, դա

---

* Առաջին անգամ անվտանգության անբաժանելիության սկզբունքը երևան եկավ 1975թ. Հելսինկիի եզրափակիչ ակտում: Ընդունելով անվտանգության անմասնատելիության գաղափարը, որպես միմյանց միջև և ողջ Եվրոպայում համագործակցության զարգացման համար անհրաժեշտ առաջնահերթ նախապայման, ԵԱՀԽ անդամները դրա վրա էին հիմնվում իրենց համագործակցության հետագա ուղղությունները կանխորոշելիս: Արդյունքում, այդ սկզբունքն արտացոլվեց ԵԱՀԿ բուդապեշտյան հռչակագրում, ընդունված 1994թ. դեկտեմբերի 6-ին: Սկզբունքն ավելի խորացվեց ԵԱՀԿ լիսաբոնյան և ստամբուլյան գագաթաժողովներում: Լիսաբոնի հռչակագրում ասվում է. "ԵԱՀԿ կենտրոնական դերակատարում ունի մեր նպատակի՝ ընդհանուր անվտանգության տիրույթի ստեղծման գործում: Դրա բնորոշ գծերն են համընդհանրությունն ու անվտանգության անմասնատելիությունը: Եվրոպայի անվտանգությունը պահանջում է լայն համագործակցություն և համակարգում երկրների և եվրոպական ու եվրատլանտյան կազմակերպությունների միջև:" Lisbon Decleration on Common and Comprehensive Security Model for Europe for the Twenty-first Century. Lisbon 03.12.1996.
"Միջազգային հանրության ռեսուրսները հնարավորինս արդյունավետ օգտագործելու նպատակով, մենք միտված ենք միջազգային կազմակերպությունների միջև առավել խորը համագործակցությանը: Charter for European Security. Istanbul, November 19, 1999.

սեփական սահմանների մոտ եղած վտանգների չեզոքացումն է:

Արդեն ոչ միայն Թուրքիան, այլև Բուլղարիան և Ռումինիան ունենալով որպես անդամ երկիր սևծովյան ավազանում, ՆԱՏՕ-ն իրեն անմիջականորեն սահմանակցող Կովկասը հակված է դիտելու որպես հետագա ընդլայնման առաջնահերթ դաշտ:

1997թ-ին դաշինքն ուներ այն մոտեցումը, որ Հայաստանի աշխարհագրական դիրքը գուցե հեռու է Բրյուսելից, բայց նրա մտահոգություններն ու շահերն այնքան էլ հեռու չեն: Կովկասյան տարածաշրջանը կարևոր շրջան է Եվրոպայի համար, այստեղ կա իրականացվելիք սոցիալական և տնտեսական ներուժ, պայմանով, որ անվտանգության խնդիրները լուծվեն խաղաղ ճանապարհով, ԵԱՀԿ սկզբունքների ու պարտավորությունների համաձայն: Եվրոպան չի կարող իրեն ամբողջովին անվտանգ զգալ կամ իրականացնել իր ողջ ներուժը, քանի դեռ կովկասյան երկրները դուրս են մնում եվրոպական անվտանգության բանաձևի սահմաններից:[3]

Այսօր արդեն, այդ բանաձևը նոր որակ և առաջնահերթություններ է ձեռք բերել: Այդ իմաստով բնութագրական են ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ջ.Ռոբերտսոնի խոսքերը. "Ինչո՞ւ ենք մենք այստեղ: Պետք է ասել, որ Կովկասը յուրատեսակ արժեք չի ներկայացնում ՆԱՏՕ-ի համար: Այս տարածաշրջանը կարևոր է ամբողջ միջազգային հանրության համար այն պատճառներով, որոնք կարող է նշել բարձրագույն ուսումնական հաստատության ցանկացած ուսանող՝ պարզապես նայելով քարտեզին: Տարածաշրջանը նաև մտահոգում է միջազգային հանրությանը. անկայունության, հակամարտությունների և ներքին հուզումների հետևանքներն աշխարհի կենսականորեն կարևոր անկյուններից մեկում՝ կարող են արտահայտվել նրա սահմաններից դուրս: Ըստ էության, մեր անվտանգությանն արդի սպառնալիքները սահմաններ չեն ճանաչում:"[4]

Միջազգային վեճերը (հատկապես սառեցված) զինված բախման վերածելու մեծ վտանգ են պարունակում: Ռազմական բախումները դաշինքին սահմանակից շրջաններում, ընդհանուր ռազմական անվտանգության վրա ազդելու ներուժ ունեն: Վերջապես, հնարավոր նոր ռազմական գործողություններն անկանխատեսելի են իրենց ընթացքով ու արդյունքով և հետևաբար անցանկալի դաշինքի համար (ռազմական տարբերակի կիրառումից հետո չափազանց

---

[3] ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Խ.Սոլանայի ելույթը Հայաստանի ամերիկյան համալսարանում. Փետրվարի 12, 1997.

[4] Տարածաշրջանում կայունության և խաղաղության բանալին գտնվում է Հայաստանի ձեռքում: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ջ.Ռոբերտսոնի հարցազրույցը "Մեդիամաքս" լրատվական գործակալությանը. 2002թ. մայիս

ծանր և երկարատև կլինի թեկուզև երերուն կայունությանն ու վստահությանը հասնելը. փոխադարձ վստահությանը միտված ՆԱՏՕ-ի ծրագրերն այդ դեպքում երկարատև հեռանկարում կկորցնեն իրենց նշանակությունը):

Կովկասյան հակամարտությունները հղի են նաև փախստականների հսկա զանգվածների տեղաշարժերով (այդ թվում դեպի ՆԱՏՕ անդամ երկրներ). հումանիտար աղետը, իր տխուր հետևանքներով, մեծապես մտահոգիչ երևույթ է ժամանակակից եվրոատլանտյան անվտանգության պատկերացումներում:

Կայուն և խաղաղ տարածաշրջանը կարևորվում է այն պատճառով, որ Հյուսիսատլանտյան դաշինքի երկրները մեծապես շահագրգռված են տարածաշրջանային էներգակիրների պաշարների նկատմամբ վերահսկողության սահմանման և դրանց արտահանման ուղիների ապահովության գործում:

1990-ական թվականների կեսերից զգալի փոփոխություններ տեղի ունեցավ Կասպից ծովի և կենտրոնական Ասիայի նկատմամբ Արևմուտքի քաղաքականության մեջ: Վերջինիս շահերը ընդգծվեցին՝ կասպիական նավթի և գազի պաշարները շահագործելու նկատառումներով: Արևմուտքի ֆինանսական և նավթային ընկերությունների ընդգրկումը տարածաշրջանային գործընթացներում գնալով ավելացնում է այն մտավախությունը, որ տարածաշրջանում անկայունությունն ու հիմնախնդիրների առկայությունը կարող են անդրադարձվել աշխարհաքաղաքական ավելի լայն մասշտաբով:[5] ՆԱՏՕ-ին կարող են վերապահվել էներգակիրների տարանցման ուղիների անվտանգության ապահովման գործառույթներ, որը կարող է ենթադրել այս կամ այն կարգավիճակով համապատասխան ուժերի առկայություն տարածաշրջանում:

Վերջապես, դաշինքի ընդարձակման հաջորդ փուլը կարող է անմիջականորեն առնչվել հարավկովկասյան տարածաշրջանին: Միայն հարևանների հետ տարածքային և այլ հակասությունների, ներքին ազգային, էթնիկական բնույթի խնդիրների լուծման դեպքում է հնարավոր տարածաշրջանի կամ նրա առանձին պետության մուտքը ՆԱՏՕ-ի կազմ:

Վերոնշյալ հանգամանքները թույլ են տալիս ընդհանրացնելու, որ հարավկովկասյան հակամարտությունները գտնվում են Հյուսիսատլանտյան դաշինքի ուշադրության կենտրոնում և դրանց լուծմանը տանող հնարավոր ճանապարհները գտնվում են ընդհանուր եվրոատլանտյան շահերի գիտակցման համատեքստում: Լայն շրջանակով անվտանգության ապահովումը դաշինքի համար ենթադրում է սեփական սահմանների մոտ առկա հակամարտու-

---

[5] "NATO and Caspian Security.A Mission Too Far?" Prepared for the US Air Forces. Richard Sokolsky and Tanya Charlick-Paley, Washington, DC, 1999, p4

թյունների կարգավորում խաղաղ ճանապարհով: Դա ապացույցն է այն բանի, որ անվտանգության նոր միջավայրում կա անվտանգության նկատմամբ նոր մոտեցումների կարիքը: 90-ականների սկզբին բավականին դժվար էր պատկերացնել այնպիսի մի վիճակ, երբ ՆԱՏՕ-ի նման ռազմաքաղաքական դաշինքը կարող էր որևէ մոտեցում արտահայտել ԼՂ խնդրի առնչությամբ: Այսօր այդ դիրքորոշումն ուրվագծվում է և բնական կարող է համարվել դաշինքի առավել ակտիվացումը տարածաշրջանային գործընթացներում:

Սկսած 1997-98թթ-ից, պարբերաբար շոշափվել է ԼՂ հակամարտության գործում դաշինքի ներգրավման հնարավորությունների և նպատակահարմարության հարցը: Կրելով վերացարկված, հիպոթետիկ բնույթ, հարցն , այնուամենայնիվ, շոշափվում է, որը խոցելի է դարձնում դրա բացառելիության մասին կանխավարկածը:

2001-ի ամռանը Ռոբերտսոնը հանդես եկավ հայտարարությամբ, որով դաշինքն արտահայտում էր իր շահագրգռությունը ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ցանկացած առաջընթացի արձանագրման գործում:

ՆԱՏՕ-ն մտադիր չէ գալ և լուծել տարածաշրջանի (Հարավային Կովկաս) ներքին և միջազգային խնդիրները: Շահագրգռված երկրները դա պետք է անեն ինքնուրույն: Սակայն, եթե ՆԱՏՕ-ն կարող է, ապա այն պատրաստ է օգնել այդ երեք երկրներին, հանդիսանալով ոչ միայն ոգեշնչման, այլև կոնկրետ խորհուրդների աղբյուր՝ անվտանգության ժամանակակից քաղաքականության և ժողովրդավարական ինստիտուտների կառուցման գործում:[6] Նման մոտեցումն արդեն առկա էր 2002թ-ին:

Վերջին տարիներին արևելյան ուղղությամբ իր գործողություններում ու հայտարարություններում ակտիվացած դաշինքի ղեկավարությունը գիտակցում է, որ դեռևս երկար ճանապարհ կա անցնելու, մինչև Հարավկովկասյան տարածաշրջանի խնդիրներին իր իրական մասնակցությունը: Սակայն նշմարելի են նման մտադրության սաղմերը՝ դաշինքի հեռահար մարտավարության համատեքստում:

ՆԱՏՕ-ի բարձրաստիճան պաշտոնյաների և դիվանագետների վերջին տարիների հայտարարությունների ու հրապարակային հոդվածների ժամանակագրական ուսումնասիրությունը թույլ է տալիս նշելու, որ ԼՂ խնդրի կարգավորմանը մասնակցություն ունենալու առաջին տեսական փորձն արտահայտ-

---

[6] Տարածաշրջանում խաղաղության և կայունության բանալին գտնվում է Հայաստանի ձեռքում. ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Լորդ Ջորջ Ռոբերտսոնի հարցազրույցը «Մեդիամաքս» լրատվական գործակալությանը, 19.11.2002թ.

վեց արդեն 2001թ-ի աշնանը: ՆԱՏՕ-ում ԱՄՆ նախկին դեսպան Ռ.Հանթերը* հանդես եկավ հոդվածով, որը կարելի է հարավկովկասյան տարածաշրջանի նկատմամբ խմորվող՝ դաշինքի ակտիվ քաղաքականության, այսպես ասած, առաջին ձնծաղիկը համարել: Հեղինակը առաջ է քաշում այն միտքը, որ ԵԱԳԽ-ն2* ի վիճակի է անել ավելին քան անում է այսօր: Գործընկերություն հանուն Խաղաղության ծրագրի աճող կարևորության պայմաններում սա բնական կարելի է համարել:

Առայժմ դաշինքի առջև դրված չէ ԵԱԳԽ-ին որոշումների կայացման լիազորություններ տալու նպատակը: ԵԱԳԽ-ն սահմանափակվում է միայն Հյուսիս Ատլանտյան խորհրդի որոշումների կայացմանն աջակցելով: Սակայն, քանի որ ՆԱՏՕ-ի գործընկեր պետություններն արդեն փորձում են իրենց վրա լրացուցիչ պատասխանատվություն վերցնել, իրերի նման վիճակը կարող է վերանայվել:

Հանթերը գտնում է, որ Հյուսիս Ատլանտյան խորհուրդը և հատկապես ԵԱԳԽ-ն չպետք է խուսափի նման հնարավորություններն օգտագործելուց, և չպետք է անընդհատ ելնի այն բանից, որ անհրաժեշտության առաջացման դեպքում նախապատվությունը պետք է տրվի մեկ այլ միջազգային կառույցի (օրինակ ԵԱՀԿ-ին) կամ առանձնահատուկ պայմանավորվածություններին: Որոշ դեպքերում հենց ԵԱԳԽ-ի կողմից նման դեր ստանձնելը կարող է առավել իրատեսական և արդյունավետ լինել՝ իր անդամ երկրների, ինչպես օրինակ Հայաստանի և Ադրբեջանի միջև հիմնախնդրի կարգավորման գործում: Այդտեղ ԵԱՀԿ Մինսկի խմբի փոխարինումը ԵԱԳԽ-ով հնարավոր կլինի այն դեպքում, երբ մեծանա Ռուսաստանի Դաշնության դերը ԵԱԳԽ-ում:[7]

Հյուսիսատլանտյան դաշինքը նրբանկատ քաղաքականություն է վարել տարածաշրջանում և շարունակում է հատկապես մեծ զգուշավորություն ցուցաբերել ազգամիջյան հիմնախնդիրների նկատմամբ: Այն պարբերաբար վերահաստատում է իր մոտեցումները՝ այդ խնդիրների լուծումները միջազգային կառույցի (ԵԱՀԿ) միջնորդությամբ գտնելու վերաբերյալ, չբացառելով

---

* Ռոբրտ Հանթերը եղել է ԱՄՆ դեսպանը ՆԱՏՕ-ում 1993-1998թթ.: Նա ավագ խորհրդատու է հեղինակավոր "RAND" կորպորացիայում և այժմ Հյուսիսատլանտյան Ասոցիացիայի նախագահն է:

2* Եվրո Ատլանտյան Գործակցության Խորհուրդ-ը միավորում է ՆԱՏՕ-ի անդամ և գործընկեր երկրներին: Հյուսիսատլանտյան խորհուրդը միավորում է միայն անդամ 26 երկրների ներկայացուցիչներին. այդ մարմնին է վերապահված դաշինքի քաղաքականության իրականացումը:

[7] Развивающиеся партнерские отношения НАТО. Как доставить золушку на бал. Р.Хантер, Вестник НАТО, 49, N3, Осень 2001, Брюсель, ст 12.

սեփական դերը՝ հնարավոր խաղաղարար գործողությունների անցկացման գործում:

ՆԱՏՕ-ի Ստամբուլի գագաթաժողովի կոմյունիկեում արդեն ասվում է. "ՆԱՏՕ-ն և ԵԱՀԿ-ն ունեն մեծապես փոխլրացնող պատասխանատվություն և ընդհանուր շահեր թե գործառնական, թե աշխարհագրական իմաստով: ՆԱՏՕ-ն կշարունակի իր համագործակցության խորացումը ԵԱՀԿ-ի հետ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հակամարտությունների կանխարգելումը, ճգնաժամերի կառավարումը, հետճգնաժամային վերականգնումը:"[8]

ՆԱՏՕ-ն չի լուծում և չի առաջադրում տարածաշրջանային հակամարտությունների լուծումներ (դա կարող է բացատրվել նաև սեփական անդամների և գործընկեր պետությունների ներքին խնդիրներին չխառնվելու վարքագծով): Այն ուղղակի փորձում է մեծացնել իր նշանակությունը ընդհանուր առմամբ տարածաշրջանային գործընթացներում և հիմնախնդիրների կարգավորման հարցում, որը բխում է իր համար կանխատեսելի տարածաշրջան ունենալու և ընդհանուր անվտանգության համակարգ ստեղծելու դաշինքի շահագրգռություններից:

Տարածաշրջանում ռազմա-քաղաքական սպառնալիքներին դիմակայելը բխում է ՆԱՏՕ-ի երկարատև շահերից: Այդ խնդիրը դաշինքը կապում է տարածաշրջանային հակամարտությունների, ինչպես նաև աշխարհագրորեն ավելի հեռու ընկած աֆղանական և իրաքյան ճգնաժամի կարգավորման հետ: Առանց տարածաշրջանային հիմնահարցերի կարգավորման, մեծ հաշվով, դժվար կլինի առաջին հերթին ապահովել կասպյան նավթի և գազի արտահանման ուղիների անվտանգությունը: Բացի կրոնական ծայրահեղականության, ահաբեկչության երևույթներից, դաշինքի մտահոգությունն են առաջացնում պոտենցիալ հակամարտությունները, որոնք ունեն տարածքային, էթնիկական դրդապատճառներ: Առաջին երկուսի դեմ պայքարը ՆԱՏՕ-ի այժմյան առաջնահերթությունն է: Սեփական սահմաններին մոտ տարածքային և էթնիկական վեճերի կարգավորումը հավակնում է ընդգրկվել դաշինքին լրջորեն անհանգստացնող հարցերի գործնական շրջանակում: ՆԱՏՕ-ի կողմից որդեգրված է հավասարակշիռ մոտեցում ԼՂ հիմնախնդրի նկատմամբ և գերակա է համարվում խնդրի լուծման խաղաղ ճանապարհը: Այդ գործում ընդունելով ԵԱՀԿ առաջնահերթ նշանակությունը, այնուամենայնիվ, նկատվում է դաշինքի դանդաղ, բայց հաստատուն մերձեցումը տարածաշրջանային հակամարտությունների հնարավոր լուծման գործընթացներին:

---

[8] Istanbul Summit Communiqué, NATO Summit, Istanbul, 28-29 June 2004, art.43